3. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ: ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ՉԱՓՈՒՄԸ

§3.1. Ինֆորմացիայի աղբյուրներ

Ինչպես գիտեք, մարդն ինֆորմացիա է ստանում հաղորդակցման հնարավոր բոլոր եղանակներով՝ մարդկանց հետ բանավոր շփում, տպագիր հրատարակություններ, ռադիո, հեռուստացույց, հեռախոս, համակարգիչ և այլն:

Ինֆորմացիա ձեռք բերելու աղբյուրները լինում են *կարգավորված* և *չկարգավորված*: Դրանց ծանոթանալու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակը: Ենթադրենք, *«Հայոց լեզու և գրականություն»* առարկայից ձեզ հանձնարարվել է կարդալ *Ռաֆֆու «Սամվել»* վեպը: Գրադարանում, ուր դիմում եք հանձնարարված գիրքը ձեռք բերելու նպատակով, գրադարանավարուհին զբաղված լինելով՝ ձեզ խնդրում է անձամբ փնտրել այն: Գրադարանում շարքերի միջով քայլելիս դուք կնկատեք, որ գրապահոցի բաժանմունքները խորագրեր ունեն. օրինակ՝ *Տեխնիկական գրականություն, Պատմություն, Գեղարվեստական գրականություն* և այլն: Ուշադիր ուսումնասիրելով *Գեղարվեստական գրականություն* բաժինը՝ այնտեղ *Արտասահմանյան գրականություն, Ռուս գրականություն, Ժամանակակից հայ գրականություն, Հայ դասականներ* և այլ նոր խորագրերով ենթաբաժիններ կգտնեք: Բնականաբար, առավել ուշադիր պետք է ուսումնասիրեք վերջին բաժինը, ապա հեղինակների անունների մեջ ըստ այբուբենի փնտրեք *Ռաֆֆու* ստեղծագործությունները, որտեղ արդեն հեշտությամբ կգտնեք *«Սամվել»* վեպը: Կարծես՝ այնքան էլ բարդ չէր:

Սակայն պատկերացրեք, որ նկարագրվածից առավել արդյունավետ միջոց կա. յուրաքանչյուր գրադարան *քարտադարան* ունի, ուր մեր խնդրին վերաբերող ինֆորմացիա կա. ընդամենը պետք է փնտրել «Ռ» տառին համապատասխանող դարակը, ապա այբբենական հաջորդականությամբ դասավորված քարտերի մեջ *Ռաֆֆի* անվան տակ փնտրել *«Սամվել»* վեպին առնչվող քարտը, որը ցույց կտա փնտրված գրքի տեղը:

Ինչպես ըստ խորագրերի կարգավորված գրապահոցը, այնպես էլ այբբենական կարգով դասավորված քարտադարանն ինֆորմացիայի կարգավորված աղբյուրներ են ներկայացնում. դրանցում «արտացոլվածը»

այն ամենաէականն է, որն օգնում է *փնտրումն իրականացնել արդյունավետ մեթոդով:*

Գրապահոց

Քարտադարան

Ինֆորմացիայի կարգավորված աղբյուրներ են զանազան տեղեկատուները, բառարաններն ու հանրագիտարանները: Սրանցում ներառված ինֆորմացիան հիմնականում կարգավորված է այբբենական կարգով:

***Կարգավորումն* ինֆորմացիայի խմբավորումն է ըստ որևէ հայտանիշի:**

Այժմ ենթադրենք, որ գրադարանում գրքերը դասավորված չեն և հավաքված են մի ընդհանուր կույտի մեջ. այս դեպքում դժվար է ասել, թե փնտրվող գիրքը երբ կգտնվի: Գրքերի նման կույտը կարելի է *ինֆորմացիայի չկարգավորված աղբյուր* համարել, որը չի կարող ինֆորմացիա ստանալու արդյունավետ միջոց հանդիսանալ:

Աղյուսակ 3.1-ում բերված օրինակում ինֆորմացիան կարգավորված է այբբենական կարգով, 3.2-ում՝ ըստ հասակի աճման, իսկ 3.3-ում՝ ըստ տարիքի նվազման:

Աղյուսակ 3.1

Անունը	Տարիքը	Հասակը
Արմեն	12	150
Գոռ	14	151
Երեմ	13	149
Զաքար	15	152
Սիմոն	14	154

Աղյուսակ 3.2

Անունը	Տարիքը	Հասակը
Երեմ	13	149
Արմեն	12	150
Գոռ	14	151
Զաքար	15	152
Սիմոն	14	154

Աղյուսակ 3.3

Անունը	Տարիքը	Հասակը
Զաքար	15	152
Սիմոն	14	154
Գոռ	14	151
Երեմ	13	149
Արմեն	12	150

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինֆորմացիայի աղբյուրների օրինակներ բերեք:
2. Դասամատյանում ամփոփված ո՞ր ինֆորմացիան կարելի է համարել չկարգավորված, իսկ որը՝ կարգավորված:
3. Ֆիզկուլտուրայի դասին ի՞նչ հատկանիշներով կարելի է կարգավորել աշակերտներին:
4. Մանրադրամների ա), բ) և գ) շարքերում գտեք արժեքներով առաջին, երկրորդ և երրորդ խոշոր մանրադրամները: Անհրաժեշտ մանրադրամները ո՞ր շարքում է ավելի դժվար գտնել:

ա)	6	7	10	5	11	5
բ)	3	5	6	7	10	11
գ)	11	10	7	6	5	3

§3.2. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄԸ

Ինչպես գիտեք, ինֆորմատիկայի գլխավոր խնդիրներից մեկն *ինֆորմացիայի փոխանցման* գործընթացին ուղղված մեթոդների ուսումնասիրումն է:

Եկեք տեսնենք, թե ինֆորմացիա փոխանցելու նպատակով նախկինում ինչ միջոցներից են օգտվել:

Հեռավոր անցյալում վերահաս վտանգի մասին լուր հաղորդելու համար հատուկ թմբուկներ են կիրառել, իսկ որոշ դեպքերում օգտագործել են խարույկի ծուխը: Ժամանակին Բյուզանդիայի և խալիֆայության սահմաններում կատարվող իրադարձությունների մասին տեղեկությունները փոխանցվել են նշանատվության լուսային համակարգի միջոցով, որը կարելի է *լուսային հեռագրասարք* համարել: Այս միջոցի գաղափարը բյուզանդական գիտության հայ խոշորագույն ներկայացուցիչ *Լևոն Մաթեմատիկոսինն* է (*800 – 870* թթ.), ով առաջարկել է Կիլիկիայի Լուլոն ամրոցից մինչև մայրաքաղաք ընկած տարածությունը բաժանել յոթ հատվածների (մեկը մյուսից *100* կմ հեռավորությամբ): Նրա խորհրդով պատրաստվել և այդ հատվածներում տեղադրվել են հատուկ կառուցվածքի, այսպես կոչված, «ժամացույցներ», որոնցից յուրաքանչյուրի վրա կատարված *12* բաժանումներից ամեն մեկը համապատասխանել է տարածաշրջանային